ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

3 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ
2023 թ.
№ 12 (1110)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Անկախությունը արժեք է

Սեպտեմբերի 21-ին Հայաստանում մշտապես փողփողում են դրոշները՝ ի նշան Հայաստանի Անկախության տոնի: Այս տարի ուրիշ էր՝ պատերազմ, էթնիկ զտում ու բռնի տեղահանություն, համահայկական ցավ... Սոցիալական հարթակներում գրեցին՝ Անկախությունը արժեք է...

«Նույնիսկ ամենախավար գիշերը կավարտվի, և արևը նորից կծագի»,-ասել է Վիկտոր Հյուգոն: Այո, պետք է հուսալ, բայց ոչ սպասել... Մենք լավատես ազգ ենք, ինչ-որ տեղ նաև չափից ավելի ռոմանտիկ: Մենք հավատում ենք երազներին, բայց դա մեղադրելի չի. ինչպե՞ս կարելի է ապրել առանց երազանքի: Դա չի նշանակում, որ պետք է կորցնել իրատեսությունը: Դա ամենակարևորն է. ունենալ հստակ ռազմավարություն և քայլ առ քայլ առաջ գնալ, զարգանալ... Իսկ ի՞նչ ենք արել և ի՞նչ ենք անում մենք: Հույսներս դնում ենք օտարի օգնության վրա՝ փոխանակ օգտագործելու զարգացման մեր բոլոր ռեսուրսները: Թշնամի երկրներով շրջապատված երկրում անթույլատրելի է անփույթ ու անտարբեր լինել, կորցնել մտքի զգոնությունը, միայն վտանգի պահին միաբանվել կամ էլ, ցավոք, պառակտվել...

«Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»,-ասել է մեծ պոետը: Իսկ դա մենք դեռ չենք հասկանում: Ճիշտ և ողջամիտ գործելու անմոռանալի դասեր են տվել Ռաֆֆին ու Թումանյանը, բայց մենք բավարարվել ենք մեր մշակութային արժեքներն աշխարհին ի ցույց դնելով ու հպարտանալով, մեր տաղանդավոր ներուժով , գյուտերի հեղինակներով ուրիշներին զարմացնելով, ուրիշ երկրների բարօրությունն ապահովելով:

Ով ենք մենք, որտեղից ենք գալիս և ուր ենք գնում. պետք է նորովի ձևակերպել՝ ինչ է մեզ պետք այսօր: Այսօր մեզ պետք է տնտեսապես հզորանալ ու զորավիգ լինել սեփական երկրի անվտանգությանը:

Իսկ հիմա ազգովի ողբում ենք, քիչ է ասել՝ վշտից կտոր-կտոր լինում. զոհերի թիվն անընդհատ մեծանում է, վիրավորներով լեցուն են բժշկական կենտրոնները, մարդկանց մոլորյալ հոսքը Արցախից ծգվում է դեպի մայր հայրենիք՝ շվար ու հուսահատ:

Իսկ մենք սոցիալական հարթակներում և այլուր փորձում ենք հասկանալ՝ ինչո՞ւ 21-րդ դարում եղավ պատերազմ ու ցեղասպանություն, բռնի տեղահանություն, ինչո՞ւ կորցրինք Արցախը, ի՞նչ տվեցին մեզ 100-ամյա ցեղասպանության դասերը, ինչո՞ւ պատմությունը կրկնվեց... Այս հարցերի պատասխանները գտնելու համար պետք է հիշենք՝ թուրք-ադրբեջանական վայրի հրոսակները չեն փոխվում՝ որքան էլ դարը առաջ գնա:

Դեռ 1918 թվականին Հովի. Թումանյանը գրել է.

Բերանն արնոտ մարդակերը էն անբան
1000 դարում հազիվ դառավ մարդասպան,
Ձեռքերն արնոտ գնում է նա դեռ կամկար
Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան:

Սիլվա Կապուտիկյանն էլ 1990-ին գրել է «Արցախյան լուրերը լսելիս» վերնագրով այս բանաստեղծությունը.

Չեմ իմանում՝ էլ ո՛ւմ դիմեմ, ո՛ւր գնամ,
Կավատների՞, թե՞ սրբերի դուռ գնամ.
Գոռամ, վայեմ աշխարհի դեմ, Աստծու դեմ,
Թե՝ քարանամ ինքնավայել, լո՜ւռ գնամ...

Սա՝ 20-րդ դարում... Դար է փոխվել, իսկ մենք նորից ազգովի այս նույն ցավի ու վշտի մեջ մոլորվել ենք...

Տեղահանվածներին պիտի աջակցենք, դժվար է, բայց փորձենք ինչ-որ ձևով ամոքել նրանց ցավը ու նաև

մտքի թռիչքում գծագրենք մեր ազգի զարգացման ու հզորանալու քարտեզը, որովհետև դա է մեր փրկության միակ ուղին: Եվ հիշենք Կոմիտասի պատգամը՝ «Սիրեք իրար, շատ սիրեք, որպեսզի ապրեք»:

Զարգացում, հզորացում, որակյալ կրթություն, հայ արժեքների, Մայրենի լեզվի անաղարտության պահպանում: Եվ ինչպես գրել է արցախցի Զուխրա Երվանդյանը, մշտապես գիտակցենք՝ «Հայրենիքը ոգի է, ապրելու խարիսխ, մտածելու ձև ու ոճ»:

Պահպանենք մեր ոգու Հայրենիքը, երբեք չկորցնենք ապրելու մեր խարիսխը, որ նույնպես Հայրենիքն է: Մտածենք հայերեն ու գիտակցենք՝ Անկախությունը բացարձակ արժեք է:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Գիտական խորհրդի արտահերթ նիստում

ՀՊՄՀ Գիտական խորհրդի արտահերթ նիստում Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության պետ Սամվել Ասատրյանը ներկայացրեց համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման համար ստեղծված աշխատանքային խմբերի փուլային աշխատանքի արդյունքում ստեղծվել է ինքնավերլուծության մի փաստաթուղթ, որում արտացոլվել են Որակի ազգային կենտրոնի կողմից տրամադրված հարցաշարի համապատասխան հավաքագրված և ամփոփված տեղեկությունները:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման «Մասնագիտական կրթական ծրագրեր» չափանիշ 3-ի համար ընտրվել են «Տարրական մանկավարժություն», «Կերպարվեստ», «Հոգեբանություն» կրթական ծրագրերը, կազմակերպվել են հանդիպում-քննարկումներ վերոհիշյալ կրթական ծրագրեր սպասարկող ամբիոնների հետ և պարբերական աշխատանքի արդյունքում վերանայվել են բոլոր առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները:

Ինքնավերլուծության վերջնական տարբերակը քննարկվել է ամբիոններում և ֆակուլտետներում՝ ըստ ստորաբաժանումների կողմից արված դիտողությունների և առաջարկությունների:

Զեկուցողը ներկայացրեց ինքնավերլուծության 10 չափանիշները՝ հանգամանորեն անդրադառնալով յուրաքանչյուրին՝ ըստ մասնագիտական ուսումնական հաստատության (ՄՈՒՀ-ի) հիմքերի, հնարավորությունների, ուժեղ ու թույլ կողմերի, վտանգների, միաժամանակ ներկայացրեց վտանգների հաղթահարման ուղիները:

Նիստը վարող ռեկտոր Սրբուհի Գևորգյանն իր գոհունակությունը հայտնեց բուհի ստորաբաժանումների ղեկավարներին և աշխատակազմերին հավատարմագրման փաստաթղթի ստեղծման աշխատանքներին ջանասիրա- ➢2

«Մենք վրեժ ունենք լուծելու: Վրեժի լավագույն ճանապարհը բարեկեցիկ երկիր կառուցելն է թուրքի քթի տակ՝ բարոյապես ուժեղ, կեղտից ու աղբից մաքրված, որպեսզի հայը ոչ թե արտագաղթի, այլ ուզենա հայրենիք վերադառնալ: Եթե այս գիտակցությունը գերիշխի մեզանում, դառնա միասնական կամք, մենք մեր վրեժը լուծած կլինենք գոնե մասամբ... անկախությունը բացարչակ արժեք է յուրաքանչյուր ազգի համար, սակարկության ենթակա չէ, չի կարելի անկախությանը, պետականությանը դեմ խոսել, վիճել անկախության շուրջ, ամոթ է: Գրականության մեջ և կյանքում առհասարակ ես ունեմ մի սկզբունք՝ սիրել հայրենիքն այնպես, ինչպես այն կա: Հայրենիքը պետք է սիրել, սիրել բաց աչքերով»:

Պերճ
ԶԵՅԹՈՒՆՑՅԱՆ

Գիտական խորհրդի արտահերթ նիստում

➢1 բար մասնակցելու համար, որի արդյունքում առաջին անգամ խորքային վերանայվել են բուհի 96 մասնագիտական կրթական ծրագրերը՝ համապատասխանեցնելով առարկայական նկարագրերի վերջնարդյունքներին, իսկ մինչև տարեվերջ կվերանայվեն ևս այլ առարկաներ:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանը, ով քննարկման և հաստատման ներկայացրեց 2024-2025 ուսումնական տարվա ընդունելության մասնագիտությունները:

Պրոռեկտորը ներկայացրեց ֆակուլտետների խորհուրդների կատարած առաջարկները՝ մասնագիտությունների ցանկի վերաբերյալ, ցավոք, ըստ որի հաջորդ ուսումնական տարում որոշ մասնագիտությունների գծով բուհն ընդունելություն չի կատարի, կլինեն նաև կրթական նոր ծրագրեր, որի համար հիմք են հանդիսացել ընդունելության արդյունքները, մասնագիտությունների նորացված ցանկը, աշխատաշուկայի պահանջները, որոշ մասնագիտությունների գծով՝ նաև դիմորդների սակավությունը:

«Մենք ամենօրյա ռեժիմով աշխատանքներ ենք տանում մանկավարժի մասնագիտությունը գրավիչ ու հեռանկարային դարձնելու ուղղությամբ»,- հավելեց պրոռեկտորը՝ ընդգծելով, որ բնագիտամաթեմատիկական առարկաների գծով դպրոցի համար ուսուցիչ պատրաստելը Մանկավարժական համալսարանի պատվախնդրության հարցն է:

Վերոհիշյալ հարցով պայմանավորված՝ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը կարևորեց մանկավարժական կրթության նկատմամբ հասարակության վերաբերմունքի ձևավորումն ու ուսուցչի կերպարի վերարժևորումը նոր ժամանակներում և դրան ուղղված քաղաքականության անհրաժեշտությունը:

Գիտական խորհուրդը հաստատեց Համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծությունը և պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանի զեկուցումը:

Աջակցություն Արցախից բռնի տեղահանվածներին

Մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմից և ուսանողներից համալրված խումբը օրեր առաջ մեկնեց Սյունիքի մարզ՝ հոգեբանական, մասնագիտական աջակցություն ցուցաբերելու նպատակով գույքագրելու բռնի տեղահանվածների կարիքները:

ՀՊՄՀ ռեկտորի խորհրդական, Մանկավարժության ամբիոնի դոցենտ Հակոբ Թադևոսյանի ղեկավարությամբ խումբը Գորիսում կատարեց կարիքների հաշվառում՝ արդեն Հայաստանի համայնքներում տեղավորված բռնի տեղահանվածներին օգնություն ցուցաբերելու համար:

Նախորդ պատերազմից հետո Մանկավարժական համալսարանը նման իրավիճակներում աշխատելու այդ փորձն ունի. արագ ինքնակազմակերպվել, ստեղծել հոգեբանական մասնագիտական խմբեր և թիրախային օժանդակություն ցուցաբերել: Մասնավորապես հոգեբանական-վերականգնողական աշխատանքի մեծ փորձ ունեն Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի փորձառու դասախոսները, իսկ նախադպրոցական և դպրոցական տարիքի տեղահանված երեխաների համար նախատեսված են դասապատրաստումներ:

Բուհի ուսանողական խորհուրդը, արհմիութենական կազմակերպությունը պատրաստակամ են ակտիվ մասնակցություն ցուցաբերել ստեղծված ծանր իրավիճակում, նաև մեծ թվով ուսանող կամավորականներ են դիմել՝ մասնակցելու վերոհիշյալ աշխատանքներին:

Ըստ Հակոբ Թադևոսյանի՝ աջակցման խմբերում ներառվել են հիմնականում բակալավրիատի ավարտական կուրսերի ուսանողները և մագիստրոսները, որոնցից շատերը մասնագիտական փորձառություն ունեն:

Նյութը պատրաստ էր տպագրության, երբ տեղեկացանք, որ ՀՊՄՀ դասախոսները, փորձագետները և ուսանողները ոչ միայն մասնակցում են ընդունիչ-բաշխիչ հանձնախմբի աշխատանքներին, այլև Վայքում, Գորիսում և Երևանի վարչական շրջաններում հոգեբանական աջակցության աշխատանքներ են իրականացնում Արցախից բռնի տեղահանված ընտանիքների անդամների հետ:



Համո ՍԱՀՅԱՆ

Մեր հանճարի հունչքն արդար՝
Օտարներին ենք տվել,
Արքայական խելքը մեր՝
Նոքարներին ենք տվել:
Մեր ազնվական այրերին,
Իրենց հոգով, խոհերով,
Կայսերական տիրույթի
Խոպաններին ենք տվել:
Իսկ ռազմի թեժ բովերում
Ասպետացած քաջերին
Ասպատակող ցեղերի
Հորդաներին ենք տվել:
Մեր գորգերը՝ խանական
Հարեմների կրքահար
Խորաններին ենք տվել,
Իսկ ադամանդն ու ոսկին,
Արդ ու զարդը մետաքսյա՝
Խորաններում բոզացած՝
Խոնարհներին ենք տվել:
Մեր ցորենը կարմրահատ,
Մեր կտավատն ու գարին
Անկուշտների՝ աչքածակ
Ամբարներին ենք տվել:
Մեր ջրերը զմրուխտյա
Եվ զմրուխտը մեր սարի՝
Քոչվորների ոչխարին
Ու գառներին ենք տվել,
Իսկ մեր գառները՝ նրանց
Գորշ գայլերին ենք տվել:
Բայց ինչքան էլ ավարեն,
Առևանգեն ու տանեն
Մեր ցանքն ու հունչքը վերջին,
Վերջին ծիլը մեր մարգի,
Մեր այգու տունկը վերջին,
Թող իմանան, որ մեկ է,
Տակը մի բան կմնա...
Տակը մի բան կմնա,
Որ օտարները չունեն,
Որ երբեք չեն ունենա:

Դա ինքնությունն է մեր սուրբ –
Աստվածային մանանա...
Մահն իր չեռքերը կայրի,
Եթե մինչև անգամ նա,
Ոչ թե փորչի, այլ, այնպես,
Մտքում դնի՝ գողանա...
Մեզ օտարներն են թողել,
Ինչ որ ունենք մերժելի,
Մեր ոտքի տակը փորել,
Չեն հանդուրժել մեզ էլի:
Նրանք հացի հետ կերել,
Մարսել են խիղճ ու ամոթ
Ու մեզ երբեք չեն ներել
Իրենց մեղքերն արյունոտ...
Ու դարչյալ չեն հանդուրժում,
Որ ապրում ենք ու դեռ կանք...
Դառնում իրենց են խաբում,
Խաբում են ու հավատում,
Թե գնում ենք դեպի մութ,
Դեպի վեցկի, դեպի չութ,
Զրաղացքար ու երկանք...
Սթափվիր այս թմբիրից
Ու ցնցվիր իմ ժողովուրդ,
Ինքդ քեզնից ամաչիր,
Ինքդ քեզ լավ ճանաչիր,
Ճանաչիր ու հավատա...
Թափ տուր թևերդ թեթև,
Զրահավոր, զորավոր...
Եվ բարչրացիր, բարչրացիր,
Բարչրացիր, և հավերժի
Վստահությունը շահած,
Նրա պատիվը պահած,
Արագածիդ գագաթից
Քո վճիռը որոտա.
– Հազար անգամ եմ մերժել,
Մերժում եմ և կմերժեմ
Հոգեվարքներն իմ բոլոր
Եվ օրհասները իմ սև:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

Չեխիայի Պարդուբիցեի համալսարանի պատվիրակության այցը Մանկավարժական համալսարան

«Էրազմուս պլյուս» ծրագրի շրջանակներում Մանկավարժական համալսարան է այցելել Չեխիայի Պարդուբիցեի համալսարանի 5 դասախոս:

Հյուրերին ընդունեց ՀՊՄՀ աշխատակազմի և միջազգային հարցերի գծով պրոռեկտոր, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մարիաննա Հարությունյանը: Նա ողջունեց պատվիրակության անդամներին՝ վստահեցնելով, որ չեխ գործընկերների հետ աշխատանքային հանդիպումները մշտապես սպասված են:



Պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանի և Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի ղեկավարների, պրոֆեսորադասախոսական կազմի հետ չեխ դասախոսները քննարկեցին առաջիկա գործունեության ծրագիրը՝ մինչև առողջության և վարքի խանգարումներով երեխաների հարցերով այցելություններ հայաստանյան մանկատներ:

Կողմերը գործնական և շահագրգիռ քննարկում ծավալեցին համագործակցության, այդ թվում՝ միմյանց պարբերականներում հոդվածների տպագրման, համատեղ ձեռնարկի ստեղծման և այլ հարցերի շուրջ:

Առաջիկայում ստեղծվելիք համատեղ ձեռնարկում անդրադարձ կարվի երեխաների հաշմանդամության խնդիրներին ժամանակակից ընտանիքներում. կներկայացվի Հայաստանի և Չեխիայի ասպեկտները:

Ինչպես նշեց ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Գոհար Հովյանը, Չեխիայի համալսարանի հետ համագործակցությունն արդեն 3 տարվա պատմություն ունի: Բավականին հաջողված է ուսանողների փոխանակման փորձը. մեր համալսարանի ուսանողները մեկ կիսամյակ ուսանում են Պարդուբիցի համալսարանում, ծանոթանում չեխական կրթական համակարգի առանձնահատկություններին: Օրեր առաջ ֆակուլտետի 3 ուսանողներ մեկնեցին ուսանելու վերոհիշյալ համալսարանում:

«Էրազմուս պլյուս» ծրագրի շրջանակներում մենք համագործակցում ենք Չեխիայի Պարդուբիցեի համալսարանի հետ, կազմակերպում դասախոսների փոխադարձ այցեր: Այս դասախոսներն արդեն երկրորդ անգամ են այցելում բուհ:

Ծրագրի վերջնարդյունքները կհրապարակվեն ուղեցույցում»,-մեզ հետ զրույցում ասաց Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Թերեզա Ազատյանը:

Հավելենք, որ չեխ դասախոսները Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի ուսանողների համար հանդես կգան մասնագիտական դասախոսություններով:

Ծանոթացան Ֆինլանդիայի կրթական համակարգի առանձնահատկություններին

Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի դասախոսական անձնակազմը Ֆինլանդիայում էր՝ ծանոթանալու տեղի կրթական համակարգում ներդրված համընդհանուր ներառական կրթության մոդելի առանձնահատկություններին:

Ֆինլանդիա էին այցելել նաև Հայաստանի կրթական ոլորտի ներկայացուցիչներ, մասնավորապես ՀՀ ԿԳՄՍ փոխնախարար Արաքսիա Սվաջյանը, հանրակրթական ոլորտը համակարգող պաշտոնյաներ, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի աշխատակիցներ:

Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանն ընդգծում է՝ ֆիննական կրթական համակարգն առանձնանում է նրանով, որ այստեղ թիվ մեկ և ամենահարգված մասնագիտությունը ուսուցչինն է: Պրոռեկտորը հույս է հայտնում, որ մեկ օր Հայաստանում ևս կփոխվի ուսուցչի հանդեպ վերաբերմունքը, որը նաև պայմանավորված է Մանկավարժական համալսարանի գործունեությամբ, դերով ու պատասխանատվությամբ:

Ֆիննական կրթական համակարգն առանձնահատուկ է նրանով, որ այնտեղ գնահատվում է ուսուցչի կրթությունն ու որակավորումը, որը հենվում է կրթական համակարգի կառավարիչ-դպրոցի տնօրեն-ուսուցիչ-սովորող-ծնող փոխադարձ վստահության և փոխօգնության վրա, նաև հավասար պայմաններ է ստեղծում բոլորի համար:

Հավելենք, որ այցը կազմակերպվել էր համալսարանի գործընկեր ԱՄՆ Պերկինս միջազգային կազմակերպության ֆինանսավորմամբ:

Հելսինկիում հայկական պատվիրակությունը հյուրընկալվեց Ֆինլանդիայի կրթության և մշակույթի նախարարությունում, հանդիպում ունեցավ կրթության փոխնախարարի հետ: Քննարկումները ոլորտի խնդիրների շուրջ արդյունավետ էին, առաջիկայում կողմերը կհամագործակցեն հանրակրթական և բարձրագույն կրթության ոլորտներում, ինչը հնարավորություններ կընձեռի Հայաստանում համընդհանուր ներառական կրթության զարգացման համար:

Լեհաստանի Պոմորսկի համալսարանի պատվիրակությունը՝ Մանկավարժականում

Մանկավարժական համալսարանում սեպտեմբերի 28-ին հյուրընկալվեց Լեհաստանի Սլուպսկ քաղաքի Պոմորսկի համալսարանի պատվիրակությունը: Լեհ գործընկերներին ընդունեց ՀՊՄՀ աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մարիաննա Հարությունյանը:

Լեհական պատվիրակության կազմում էին գիտության գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Դարիուշ Ֆիցեկը, ուսումնական գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Դաշուտա Գերչինսկան, բանասիրական գիտությունների թեկնածու, «Polilog» գիտական ամսագրի գլխավոր խմբագիր Գալինա Նեֆագինան:

Գործնական խոսակցություն ծավալվեց համագործակցության շուրջ. կողմերը նախանշեցին համագործակցել ուսանողների փոխանակման, ուսուցիչների որակավորման բարձրացման, գիտության ոլորտում՝ գիտական պարբերականներում հոդվածների տպագրման և այլ հարցերի շուրջ:



Պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանն առաջարկեց համագործակցել «Էրազմուս պլյուս» ծրագրի շրջանակներում, որը լավագույն հնարավորությունն է միջբուհական հմագործակցության տեսանկյունից: Նա ներկայացրեց Մանկավարժական համալսարանի տարեցտարի ընդլայնվող միջազգային աշխարհագրությունը՝ ասելով՝ հանձին ձեզ կունենանք միջազգային նոր գործընկեր բուհ:

Լեհ գործընկերները ներկայացրին իրենց համալսարանը, որը նախկինում Ակադեմիա է եղել, հունիսի 1-ից ստացել է համալսարանի կարգավիճակ, բազմապրոֆիլ մասնագիտությունները և հետաքրքրվեցին մեր երկրում մանկավարժի մասնագիտության գրավչությամբ:

Հանդիպմանը մասնակցում էին ՀՊՄՀ գիտության գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը և Ռուսաց լեզվի ամբիոնի դոցենտ Լիլյա Բալասանյանը:

«Մենք շահագրգիռ ենք համագործակցելու ձեզ հետ և անպայման համագործակցության ընդհանուր եզրեր կգտնենք»,-ասաց պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը՝ ներկայացնելով Մանկավարժական համալսարանի գիտական պարբերականները, մանագիտական խորհուրդներն ու բուհի մասնագիտական հնարավորությունները:

Պրոռեկտոր Դաշուտա Գերչինսկան շնորհակալություն հայտնեց հանդիպման, ջերմ ընդունելության և համագործակցության պատրաստակամության համար: Կրթությունը պետք է զարգացնել համագործակցությամբ, մենք շատ ուրախ ենք, որ համագործակցելու ենք ձեր երկրի, ձեր համալսարանի հետ՝ ընդլայնելով մեր միջազգային կապերը:

Հանդիպումն անցավ ջերմ, բարեկամական ու կառուցողական մթնոլորտում և եզրափակվեց հուշագրի ստորագրումով և հուշանվերների փոխանակմամբ: Սա համագործակցային առաջին քայլն էր լեհ գործընկերների հետ, որը շարունակականության մեջ կընդգրկի համալսարանական տարբեր ոլորտներ:

Ս. ԱՍՐՅԱՆ

Հայապահպան գործունեության համար

Սեպտեմբերի 15-ին ՀՊՄՀ ռեկտորատի նիստում ռեկտոր Սրբուհի Գևորգյանը ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցի տնօրեն, մանկավարժական գիտությունների թեկնածու Շողիկ Հայկազի Փահլևանյանին պարգևատրեց «Մանկավարժական համալսարան» մեդալով՝ դպրոցի հիմնադրման 35-ամյակի և համալսարանի 100-ամյակի կապակցությամբ:

Ռեկտորը ներկայացրեց Շողիկ Փահլևանյանի անընդմեջ հայապահպան գործունեությունը 35 տարիների ընթացքում՝ ընդգծելով և կարևորելով դպրոցի և Մանկավարժական համալսարանի համագործակցությունը:

Շողիկ Փահլևանյանը շնորհավորեց ներկաներին համալսարանի 100-ամյակի առթիվ և շնորհակալություն հայտնեց պատվավոր պարգևի համար՝ ասելով. «Ինձ համար պատիվ է արժանանալ նման պարգևի հայրենիքում՝ մեկդարյա պատմություն ունեցող համալսարանի պատերի ներքո: Տա Աստված, որ աշխարհում և հայրենիքում լինի խաղաղություն, որպեսզի համատեղ ուժերով կարողանանք իրականացնել հայրենանվեր մեր առաքելությունը՝ ի բարօրություն մեր հայ ազգի և Հայաստան աշխարհի»:

Ճանաչողական այցեր Երևանում

Ամառային արձակուրդների ընթացքում Մոսկվայում Հայաստանի դեսպանատանը կից «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցի մի խումբ սովորողներ և ուսուցիչներ դպրոցի տնօրեն Շողիկ Փահլևանյանի հետ Երևանում այցելեցին 20-րդ դարի մեծ բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի տուն-թանգարան:

Տուն-թանգարանի տնօրեն, բանասիրական գիտությունների թեկնածու Արմենուհի Դեմիրճյանը սիրով ընդունեց մոսկվաբնակ ուսուցիչներին ու սովորողներին, որոնցից Աննա Կոտլովան սիրով ասմունքեց և թանգարանին նվիրեց Սիլվա Կապուտիկյանին նվիրված իր ստեղծագործությունը.

Твой голос, солнцем позлащённый,
О дружбе пел и о любви,
О Родине, в огне невзгод калённой,
О возрождении отеческой земли.
Твой дом хранит мотивы и созвучья
Пути, прошедшего через десятки стран.
В края какие б не забросил случай,
Душа настроена на свой меридиан.
И пусть язык твой мне ещё не покорился,
Твоя любовь к нему, что взрощена в стихах,
Даёт мне силы продолжать учиться,
Отбросив в сторону сомнения и страх.

Ուսումնաճանաչողական այցերը պարբերական բնույթ կրեցին. աշակերտները և ուսուցիչները երևանյան արձակուրդների ընթացքում եղան նաև Եղիշե Չարենցի, Հովհաննես Թումանյանի թանգարաններում, Կոմիտասի ինստիտուտ-թանգարանում, Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանում:

Ամառային արձակուրդները ուսումնական գործընթացի շարունակությունն են, որ հարստացվում է ուսումնաճանաչողական ու հայրենագիտական այցերով:

ՄԱՅՐԵՆԻԻ ՀԱՆԴԵՊ՝ ՍԻՐՈՎ ՈՒ ՊԱՐՏՔԻ ԶԳԱՑՈՒՄՈՎ

Ով ասես գալիս, մեզ դա՛ս է տալիս՝
Կիրթ ու նորացված:
Մերն հատի՜կ-հատի՜կ արմատից ջնջում՝
Ի՞նչ են սերմանում:
Թվարկե՞մ…ցա՛վ է…
Ահա մի նմուշ.
Հայ եկեղեցում՝ Ավետարանչական,
Հայ եկեղեցու սպասավորին՝
Ալեհեր մի հայ՝
Իր հայ թոռնուհու ստեղծագործած
Աղո՛թքն էր կարդում՝ անգլերե՜ն լեզվով՝
Հպա՜րտ, հիացա՜ծ,
Եվ երկուստե՛ք էր հրճվանքը թվում:
Ներիր, Տեր Աստված, դու ոգեղեն ես,
Եվ աղոթքն՝ ա՛ռ քեզ՝ հոգո՜ւ մրմունջն է,
Որ քո՛ շնորհած լեզվո՜վ է պոռթկում:
Իսկ հա՛յ մանուկին հայո՛ց լեզուն ես
Շնչի հետ տվել:
Օ, Տեր իմ Աստված, աղերսո՜ւմ եմ քեզ,
Հայից՝ հա՛յ լեզվով աղոթքն ընդունես:

1990-ականների սկիզբն էր: Ես այս տեսարանի ականատեսն էի: Հրճվանք ապրող եռյակին իմ վերաբերմունքն արտահայտեցի գլխի մերժողական շարժումով և, հանդիմանական հայացք նետելով, լուռ հեռացա:

Իմ պատասխանն, ահա, ա՛յս բանաստեղծությունը եղավ:

Տխրությամբ եմ հիշում՝ տարիներ առաջ, քաղաքի կենտրոնական փողոցներում խառնալեզու հսկա գովազդապաստառների շարքում իր պատվավոր տեղն ուներ ԿԳՆ Լեզվի պետական տեսչության հայատառ վահանակը, որը 1-ին կետով հիշեցնում էր՝ «ՀՀ-ում պետական լեզուն հայերենն է» և 2-րդ կետով հորդորում՝ «Անաղարտ պահենք մեր մայրենին»:

Այսինքն՝ պետականորեն փաստվում էր, որ Մայր Հայրենիքում, ուրեմն, անտեսվում և աղավաղվում է Մայր լեզուն:

Չխորանանք պատմական ճշմարտությունների մեջ, թե՝ մեր լեզուն է մեզ հայ պահել, թե՝ մեր լեզվով ի՜նչ հարուստ ու շքեղ են հնչում Սուրբ Գիրքն էլ, Նարեկացին ու Շեքսպիրն էլ, աշխարհի բազում դասականները՝ նույնպես: Ուղղակի փաստենք, որ մեր լեզուն այլևս չի փայլում իր գեղեցիկ հնչողությամբ, իր ճոխ բառապաշարով:

Ամեն Աստծո օր մենք աղավաղում, նվաստացնում, աղքատացնում ենք մեր լեզուն: Իհարկե, մենք այլասեր ենք: Կարևորում, սովորում ու սիրում ենք օտար լեզուներ, սակայն մոռանում ենք, որ պետական լեզու լինելը իրավունք ու արտոնություն է տալիս առաջինն ու գլխավորը լինելու, այնինչ մեր պետական լեզուն մեր երկրում ո՛չ առաջինն է, ո՛չ գլխավորը:

Լեզվի հանդեպ անհարգալից ու արհամարհական վերաբերմունքը ճչում է հեռուստաթերներից, աղմկում է տպագիր մամուլում, կայքերում, շատ ու շատ պաշտոնյաների, պատգամավորների, նույնիսկ՝ մտավորականների ելույթներում:

Լեզվի կրող-փոխանցողը, պահող-պաշտպանողը, լեզվի հանդեպ սեր, հիացմունք ու հպարտություն սերմանողը նաև գրավոր խոսքն է: Ցավոք, գրավոր խոսքի, գրքի նկատմամբ հետաքրքրությունը հանգած է:

Դահլիճային գրական միջոցառումներ, պոեզիայի երեկոներ չկան, հեռուստաթերներից գրական հաղորդումները, որպես մերժելի դասակարգ, վերացված են:

Ազգային զարթոնքի օրերին հիացնող շատ բան կար: Ազգային մոռացված, բարձրարժեք կատեգորիաներին կարոտած՝ մեզ արդեն տեսնում էինք, քիչ էր մնում թե՝ ազգային տարազով, ազգային երգ ու պարին սիրահար, մայրենի քաղցրահունչ լեզվով գեղգեղալիս՝ պետական լեզուն՝ հայերեն, պաշտոնաթերթերը՝ հայերեն, ցուցանակները, անվանումները, գովազդային պաստառները՝ հայատառ:

30+ տարիներ անց էլ օտար լեզուների հարգն ավելի բարձր է ու կարևորությունը ավելի պահանջված; Թող այդպե՛ս լինի, թո՛ղ լինի այդպես, բայց ամենա-ամենաբարձր հարգը Մայրենին պիտի վայելի, ամենա-ամենակարևորն ու պահանջվածը Մայրենին պիտի լինի: Մա՛յր Հայրենիքում, Մայրենի լեզուն, Մոր կաթի հետ ներարկված լեզուն:

Քարոզ-կարգախոս-հորդորներով Մայրենիի հանդեպ սեր չես ներարկի, սեր չես սերմանի: Այսօր դա բնական և օրինաչափ երևույթ չէ, ուսուցողական ազդեցիկ միջոց չէ:

Ուսումնակրթական լսելի օղակներ չկան, չկան ոչ միայն լեզվի մասին կամ լեզվին նվիրված հեռուստահաղորդումներ, այլև հեռուստահաղորդավարների լեզուն ինքն է աղավաղում, աղքատացնում, օտարացնում, ի՛նքն է այլափոխում մեր ոսկեղենիկի հնչողությունը:

Հակազգային ու հակաբարոյական հեռուստասերիալների կենցաղային-փողոցային բառապաշարը մտել է ընտանիք, դպրոց, հասարակական վայրեր, դարձել հաղորդակցման առօրյա ու սովորական, ընդունելի միջոց:

Եթերից հնչող խոսքն ազդեցիկ ու օրինակելի է ավելի, քան, ցավոք, վերապահումներով, դասաժամերին գործածվող հայո՛ց լեզուն: Մայրենի լեզվի ու գրականության դպրոցական ծրագրերն ու դասագրքերը մայրենի լեզվի իմացության ու հայ գրականության արժանի ճանաչողությանն ի՛նպաստ չեն: Բայց սա խոսակցության այլ թեմա է:

ՀԳ. 1. Սիրելի՛ Մանկավարժականցիներ, և ո՛չ միայն Բանասիրական ֆակուլտետի, դո՛ւք եք կոչված դպրոցներում կիրառել, ուսուցանել, կարևորել ու աշակերտների մեջ սերմանել լեզվի ուժն ու ոգին, այն զորությունը, որ միայն լեզուն, Մայրենի լեզուն է Մայր հողը, Մայր բնությունը, Մայր Հայրենիքը, իսկապես, Մո՛ր դերում պահողը: Արժանացե՛ք այդ պատվին:

Հպարտության արժանի մեր լեզուն սիրո, խնամքի, պաշտպանության, գնահատանքի խնդիր ունի: Մենք ուղղակի պարտավոր ենք տեր կանգնել Մայր լեզվին՝ ինչպես Մայր Հայրենիքին, Մայր հողին, Մայր բնությանը:

Բոլո՛ր, բոլոր հայե՛ր: Հայրենիքո՛ւմ, թե՝ հայաբնակ դրսերո՛ւմ:

ՀԳ. 2. Ո՛ր օտար երկիր գնում ենք, ջանում ենք իրենց լեզվով բացատրվել-խոսել, ո՞ր օտար երկրից գալիս են, դարձյալ ջանում ենք իրենց լեզուներով բացատրվել: Այս երևույթն ինչո՞ւ փոխադարձ չի դառնում: Ինչո՞ւ է այսպես:

Ժաննա ՂՈՀԻԿՅԱՆ
գրող, հրապարակախոս
Մանկավարժական ինստիտուտի
Բանասիրական ֆակուլտետի 1972
թվականի շրջանավարտ

ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ

«Գմբեթավոր հովանոցը» վեպը՝ մերօրյա պատգնապներով ու գալիքի խոհերով

…Գիրքը հեռավոր լեռների մեջ կորած Արցախի մասին է, որտեղ ապրում են հայեր: Կիսավեր, պատերազմներից բզկտված, աշխարհից, ճանապարհներից կտրված, թշնամու շրջափակման մեջ գտնվող Արցախս ինձ համար պապենական Դերանց ձորում, լեռնային նեղ կածաններով դեպի վեր ձգվող, դեպի դարերի խորքը գնացող լքված, քանդված մատուռի տեսքն ունի, որտեղ նախնյացս տապանաքարերն անհիշելի ժամանակները ձգվող ցեղիս հավաքական հիշողությունն ու ոգին են:

Մարգարետ ԴԵՐԱՆՑ

ՀԳ. Երբ գիրքը տպագրվեց, Արցախն արդեն հայաթափվել էր մեր թշնամու կողմից պատերազմի ու վայրագությունների արդյունքում:

Սեպտեմբերի 26-ին Հայաստանի գրողների միության կլոր դահլիճում տեղի ունեցավ արմատներով արցախցի, ԱՄՆ-ում բնակվող արձակագիր Մարգարետ Դերանցի «Գմբեթավոր հովանոցը» վեպի շնորհանդեսը, որն անցավ արժանապատիվ, պահին հարիր ու ոգեղենիկ, բազմամարդ մթնոլորտում:

Լայնամասշաբ ու բավականին ընդգրկուն այս գիրքը հեղինակի 7-րդ գիրքն է:

«Ամենամեծ հաղթանակն այն է, երբ մարդ հաղթում է ինքն իրենե: Սրանք հույն փիլիսոփա Պլատոնի խոսքերն են: Դահլիճում տիրում էր հենց այդ ոչ «նյութական» հաղթանակը: Ներկաները մոռացել էին տարակարծություն, համակրանքներ և հակակրանքներ և մտահոգված էին ցավի անդնդով անցած ու փրկված արցախահայերի նկատմամբ օգնության, կարեկցանքի, հյուրընկալության, սրտացավության ազնիվ մղումներով»,-նկատեց Մարգարետ Դերանցը:

Հանդիպմանը ներկա գրողներն ու գրականագետները բարձր գնահատեցին գրքի ասելիքն ու ոճը, անդրադարձան հիմնական շեշտադրումներին՝ Արցախ-Հայաստան-Սփյուռք համատեքստում:

«Գիրքը ստեղծվել է հայի, հայրենիքի, Արցախի ապագայի հանդեպ խոր ապրումներից,-ասաց Մարգարետ Դերանցը:-Վեպի հերոսներից մեկն ասում է՝ մենք չհասկացանք հաղթանակի գինը, հաղթողները գիտեն հաղթանակի գինը, որովհետև հաղթանակը ծառ է, որին պետք է սնուցել, խնամել: Ոգի է պետք, արյան հիշողություն»:

Գրողը փաստեց՝ այս ծանր օրերին մենք հասկացանք, որ Արցախը հայի ազգային երազանքի, մեր կորցրած հայրենիքների մարմնացումն է: Գիրքը նաև գալիքի խոհերի, խորհուրդների գիրք է, ներքին տագնապների գիրք, բայց, այնուամենայնիվ, ամենակարևորը հույսն ու հավատն է:

Խոսելով հայրենիքի համար արժանապատիվ պայքարող հերոսների է մեր ազգային զարթոնքին:

Մարգարետ Դերանցը կարևորեց գրողի ու գրքի դերը՝ մեր վաղվա օրվա արժանապատիվ պայքարի գործում՝ եզրափակելով. «Միմյանց կարեկցելով, միմյանց վերափոխելով՝ մենք կմոտենանք մեր ազգային նպատակներին»:

Սփյուռքում ծավալած ակտիվ գրական-մշակութային գործունեության համար ՀԳՄ նախագահ Էդվարդ Միլիտոնյանն արձակագիր Մարգարետ Դերանցին պարգևատրեց «Գրական վաստակի համար» մեդալով:

Դահպանելով ավանդույթները, որ գալիս է մեր պատմությունից

Նկարիչների միության Մարտիրոս Սարյան ցուցասրահում հոկտեմբերի 1-ին բացվեց Հայաստանի, Արցախի և Չեխիայի նկարիչների միության անդամ, ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոնի պատվավոր անդամ, արմատներով արցախցի Աշոտ Առաքելյանի հոբելյանական ցուցահանդեսը՝ շուրջ չորս տասնյակ նկար: Նկարչին 75-ամյակի և անհատական ցուցահանդեսի բացման առթիվ շնորհավորեց Հայաստանի նկարիչների միության նախագահ Սուրեն Սաֆարյանը:

«Շատ դժվարին ժամանակներ ենք ապրում, բայց պետք է կարողանանք ուժ գտնել մեր մեջ և մշակութային միջոցառումներ կազմակերպել: Դա կենսական նշանակություն ունի. պետք է արարենք, ցուցադրվենք, մենք պետք է ապրենք և պարտավոր ենք ապրեցնել հայ ժողովրդին՝ ի հեճուկս թշնամու: Մենք ունենք դարավոր մշակույթ, որը պետք է փոխանցենք սերունդներին»,-ասաց ՀՀ նկարիչների միության նախագահը՝ հավելելով, որ ապրելով արտերկրում՝ Աշոտ Առաքելյանը ոչ մի վայրկյան չի խզել իր կապը հայրենիքի հետ, այլ ամբողջ էությամբ ապրել ու ստեղծագործել է հանուն իր հայրենիքի:

«Բարի, ինչպես իր ստեղծագործությունները, պարզ ու շիտակ մարդ, այն արվեստագետներից, ով չի սիրում ամպագոռգոռ ելույթներ, այլ գլուխը կախ, ապրում է իր արվեստով և փորձում դիմացինին պարգևել միայն դրական զգացողություններ»,- ասաց ՀՀ նկարիչների միության նախագահը՝ ընթերցելով Չեխիայի ակադեմիական նկարչի՝ Ժոզեֆ Մատիաս Մինարեկի ուղերձը՝ նվիրված հոբելյարին:

Սուրեն Սաֆարյանն Աշոտ Առաքելյանին մաղթեց ստեղծագործել ու արարել խաղաղ երկնքի տակ:

Ելույթ ունեցավ Հայաստանի նկարիչների միության իսկական անդամ Արևշատ Ավագյանը: Նա արժևորեց Աշոտ Առաքելյանի արվեստը՝ վերջինիս համարելով պատկերավոր, իր ուրույն ձեռագիրն ունեցող նկարիչ: Միաժամանակ հավելեց՝ նա նաև պատմաբան է, ում քաղաքացիական մոտեցումները չափազանց արդիական են: Աշոտ Առաքելյանը խոսում է ոչ միայն Արցախում տեղի ունեցող ու շարունակվող ողբերգական իրադարձությունների մասին, այլև Եվրոպային սպառնացող վտանգի՝ մուսուլմանների՝ օրեցօր ավելացող թվի մասին:

Լինելով փայլուն հրապարակախոս՝ Աշոտը հանդես է գալիս Չեխիայի թերթերում, պարբերականներում՝ եվրոպացիներին զգուշացնելով աշխարհին սպառնացող չհայտարարված կրոնական պատերազմի մասին. «Աշոտի հրապարակախոսական սրտացավությունը, մարդկային արվեստագետի հայացքը շարունակաբար ուղղված է այդ հարցերին՝ պարբերաբար եվրապական աշխարհին տեղյակ պահելով նրան սպառնացող վտանգի մասին,-ասաց Արևշատ Ավագյանը:- Պառակտվածության, իրար չհասկանալու այս օրերին, երբ թշնամուն հաջողվել է տարիներ շարունակ քանդել մեր քաղաքական մշակույթը, մեզ նորից տանելով ցեղասպանության ճանապարհով, անչափ կարևոր է լինել ուշադիր, համբերատար, ներողամիտ և ունենալ իրար սիրելու կարողություն»:

«Յուրաքանչյուր մարդ ունի իր կյանքի ճանապարհը,-ասաց հոբելյարը:-Իմ կյանքի առաջին մասն անցել է Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում. եղել եմ լաբորանտ, կաբինետի վարիչ, դասախոս: Հայրենիքից հեռացողներին ոչ մեղադրել եմ, ոչ էլ արդարացրել: Գիտե՞ք՝ սերը հայրենիք չի ճանաչում: Այնպես ստացվեց, որ ես ամուսնացա չեխուհու հետ և հանգամանքների բերումով տեղափոխվեցի Չեխիա:

Սկսեցի զբաղվել նկարչությամբ: Բազմաթիվ ցուցահանդեսներ եմ ունեցել ոչ միայն Չեխիայում, այլև եվրոպական մի շարք երկրներում: Ուրախ եմ, որ իմ համեստ տեղն եմ գտել նկարիչների համայնքում՝ պահպանելով ավանդույթները, որ գալիս է մեր պատմությունից»:

Հավելենք, որ Աշոտը տարվա ընթացքում հոբելյանական ցուցահանդեսներ է ունեցել Չեխիայի Ուհերսկե Հրադիշտե և այլ քաղաքներում՝ ցուցադրելով 90 նկար և քաղաքապետ Պոլակովայի կողմից արժանանալով պատվոգրերի, իսկ քաղաքապետի տեղակալ Վլադիսլավ Կրիշտովի կողմից՝ պարգևների: Հայ նկարիչն ուրախ է, որ չեխ հասարակությունը մեծ բարյացակամություն է դրսևորում իր հանդեպ:

Ամփոփելով խոսքը՝ Աշոտ Առաքելյանը բոլորին մաղթեց՝ չհուսահատվել, որովհետև միշտ մի ելք կգտնվի՝ համախմբվելու ազգային արժեքների շուրջ՝ վերարժևորելով սեփական պատմությունը:

Միլվա ԱՄՐՅԱՆ



ՀՊՄՀ պրոֆեսոր Մարտին Գիլավյանի հիշատակին

Լույս է տեսել Հայագիտական հանդեսի Հավելվածը՝ նվիրված ՀՊՄՀ պրոֆեսոր Մարտին Գիլավյանի հիշատակին: Հավելվածում զետեղվել են բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանի, ՀԳՄ քատուղար, բանասիրական գիտությունների դոկտոր Պետրոս Դեմիրճյանի, բանասիրական գիտությունների թեկնածուներ Մելինե Գիլավյանի, Արմինե Մուրադյանի, Լուսինե Գալստյանի, Հայագիտական հանդեսի խմբագրի տեղակալ, բանասիրական գիտությունների թեկնածու Անահիտ Հարությունյանի, Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ Հովհաննես Սարգսյանի, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Անահիտ Ամիրխանյանի, «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի ավագ գրադարանավար, մանկավարժական գիտությունների թեկնածու Նելլի Թադևոսյանի (ՀՊՄՀ) սրտի խոսքն ու հուշերը, ինչպես նաև մանկավարժական գիտությունների դոկտոր Իննա Սարգսյանի և Քրիստինա Մարտիրոսյանի (Վ. Բրյուսովի անվան համալսարան), բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Քնարիկ Աբրահամյանի, «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթի խմբագիր, բանասիրական գիտությունների թեկնածու Սիրվարդ Ասրյանի (ՀՊՄՀ) գիտական հոդվածները՝ նվիրված Մարտին Գիլավյանին:

«Վերջին շրջանում մի քանի անակնկալ, ցավալի կորուստներ ունեցանք: Նրանցից մեկն է ճանաչված գրականագետ, սիրված մանկավարժ Մարտին Գիլավյանը,-գրել է ՀԳՄ քարտուղար Պետրոս Դեմիրճյանն իր հոդվածում:- Պրպտող միտք ուներ, նախաձեռնող, արարող խառնվածք: Մանկավարժական համալսարանի նրա հիմնած «Հայագիտական հանդեսը», որի գլխավոր խմբագիրն էր 2005 թվականից, աչքի է ընկնում հրապարակումների գիտական բարձր մակարդակով: Լայն հետաքրքրությունների տեր անձնավորություն էր: Նրա գրականագիտական հետազոտությունների ոլորտը նորագույն շրջանի հայ պոեզիան էր՝ սկսած 50-60-ական թվականներից, զարգացման միտումներից և օրինաչափություններից, մինչև միջազգային գրական կապերն ու առնչությունները: Չափազանց կարևորում էր հայոց պատմությունը չմոռանալու և այնտեղից դասեր քաղելու անհրաժեշտությունը: Նաև՝ ազգի հոգևոր ներուժը: Սիրում էր մեջբերել Համո Սահյանի տողերը՝ «Ժողովուրդների ուժը, հզորությունը չափվում է ոչ թե ունեցած զենքի, զորքի քանակով, այլ՝ հոգևոր մաքառումների խորությամբ ու լայնությամբ»: Հայոց ոսկեդեմիկ լեզվի պաշտամունք ուներ. համոզված էր, որ «Լեզուն ազգի ինքնության պահպանման առաջին գրավականն է» և «Մենք պարտավոր ենք պահպանել մայրենին, ապրել մայրենիով»: Ուզում եմ հատկապես նշել նաև Մարտին Գիլավյանի աներեր հավատը արդի մեր երիտասարդության նկատմամբ, որին կրթելու և դաստիարակելու կարևորագույն գործին է նվիրել իր կյանքի լավագույն տասնամյակները հայկական պետական մանկավարժական համալսարանում: Հպարտանում էր, որ ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի ուսանողներ են եղել նաև Սերո Խանզադյանը, Հրանտ Մաթևոսյանը, Ռազմիկ Դավոյանը…

Վստահ եմ, որ Մարտին Գիլավյան գիտնականի, մանկավարժի վաստակն ու գործը սերունդների մեջ անպայման կտան իրենց ցանկալի արդյունքը, որը և նպաստելու է բոլորիս հիշողության մեջ նրա կերպարի կենդանի և անխաթար մնալուն»:

Ուսանողի օրագրից

Հայրենիքը մեր սիրո կարիքը շատ ունի

Մի քանի ամսից կավարտեմ բակալավրի չորրորդ կուրսը: Այս չորս տարիները նույնքան լի էին տպավորություններով, որքան դպրոցական տասներկու տարիները: Սիրելի համալսարանին հրաժեշտ տալու մտքից սիրտս թախիծով է լցվում, ու ես արդեն հազարերորդ անգամ մտքով գնում եմ անցյալ:

Առաջին ուսումնական տարում, երբ ընկերուհուս ուղեկցությամբ եկա ու հայտնվեցի համալսարանի բակում, մտքովս մի բան անցավ. «Ի՞նչ գեղեցիկ շենք է և ի՞նչ ընդարձակ բակ»: Տասնութամյա աղջկա համար, իհարկե, շատ տպավորիչ էր նույնիսկ սանդուղքների՝ իրար հաջորդող շղթան, որ բարձրացրեց ու տարավ երրորդ հարկում գտնվող մի կոկիկ սենյակ: Պատին փակցված գրությունն, իհարկե, հուշեց, որ դեկանատն է, և ես, մի քանի անգամ շունչ քաշելով, բացեցի դուռը: Ես արդեն գիտեի, որ ընդունվել եմ, բայց ինձ ուսանող

զգացի հենց այդ պահից, երբ արդեն համապատասխան փաստաթղթեր էի հանձնել համալսարանին:

Անցնում եմ դեկանատի կողքով, ու ապշելու բան է, թե ինչպես այսքան տարի անց նույն հուզմունքը պատում է ինձ, ու նորից զգում եմ ինձ առաջին կուրսեցու պես:

Համալսարանում շատ լսարաններ կան, որոնց կողքով անցնելիս նույնպես հուզվում եմ: Երկրորդ կուրսում մեկական օր ամեն շաբաթ չէինք գնում համալսարան ու չնայած ուսումնաճանաչողական պրակտիկայի դպրոցներում մեզ սիրով էին դիմավորում, բայց հասցնում էինք կարոտել համալսարանը: Մայրական սիրո պես անուշ մի բան կա համալսարանի պատերի ներսում: Ուժեղ մի բան: Իսկ ի՞նչն է մեզ ուժեղ դարձնում, եթե ոչ գիտելիքը: Առավոտյան դասի գնալիս առաջին կուրսեցիներին եմ տեսնում և ուրախանում, որ նրանք կարող են զինվել գիտելիքով ու շենացնել մեր երկիրը:

Ես ուզում եմ, որ արցախցին, որ ինձ պես հայ է (այս փաստը շեշտում եմ, քանի որ շատերը տարանջատում են Հայաստանում ապրող հային Արցախում ապրողից), նույնպես հնարավորություն ունենա սովորել այս բուհում: Ուզում եմ միջանցքում քայլելիս առաջին կուրսեցիներից մի քանիսը խոսեն, և ես սկսեմ ժպտալ, որովհետև ինձ համար շատ հաճելի է Արցախի քաղցր բարբառը լսելը: Ես շատ բան չեմ ուզում… ես ուղղակի ուզում եմ մարդիկ ապրեն, ոչ թե գոյության կռիվ տան: Բայց ես չեմ կորցրել խաղաղ երկնքի տակ ապրելու հույսս: Չեմ կորցրել հույսս, որովհետև Արցախը հավատում է: Դժվարագույն պայմաններում արցախցին դարձյալ հավատում է: Ուզում եմ ոչ մի վայրկյան չդադարենք հավատալ ու միասնական ուժերով հասնենք նորանոր հաղթանակների:

Համալսարանն ավարտելուց հետո մտադիր եմ աշխատել դպրոցում և աշակերտներիս սովորեցնել սիրել հայրենիքը: Հայրենիքը մեր սիրո կարիքը շատ ունի…

ՀԳ. Երբ նյութը պատրաստ էր տպագրության, Արցախի հայությունը բռնի տեղահանվեց, բայց վերադառնալու հույսը չի մարում նրանց սրտերում:

Թագուհի ԱՂԱՍՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ,
1-ին կուրս

Այցելություն Նովոսիբիրսկ

Սեպտեմբերի 25-ին, Նովոսիբիրսկի մարզի կառավարության շենքում տեղի ունեցավ VI միջազգային պատմական դպրոցի հանդիսավոր բացումը:

Նման մասշտաբային միջոցառում Նովոսիբիրսկում առաջին անգամ էր անցկացվում:

Այս տարի դպրոցը համախմբել էր բակալավրիատի ավելի քան 150 ուսանողների և ասպիրանտների, ովքեր սովորում են 73 բարձրագույն ուսումնական հաստատություններում: Հրավիրվածները 39 քաղաքներից և 34 երկրներից էին, այդ թվում՝ Հայաստանից, Բելառուսից, Ղազախստանից, Ուզբեկստանից, Ալժիրից, Հնդկաստանից, Իրանից, Չինաստանից, Սերբիայից և այլն:

ՀՊՄՀ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի պատմության բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհիներ Սաբինա Դավթյանը և Ժանետա Նիկողոսյանը ներկայացնում էին Հայաստանը:

Ծրագիրը կազմված էր հինգ թեմատիկ ուղղությունների շուրջ՝ նվիրված համաշխարհային մշակույթների ազդեցությանը, պատմական հիշողության ուսումնասիրման և պահպանման արդի խնդիրներին, Ռուսաստանում հասարակական-քաղաքական վերափոխումների պատմությանը, հայրենական գրական ժառանգությանը, ինչպես նաև քաղաքների ձևավորմանը:

Անմնացորդ նվիրումով

Խոր վշտով տեղեկացնում ենք, որ կյանքի 73-րդ տարում կյանքից հեռացել է ՀՊՄՀ Երաժշտության ամբիոնի դոցենտ Սարգիս Գայիջյանը:

Սարգիս Գայիջյանը 1977-1991 թթ. ՀՊՄՀ-ի կուլտուրայի ֆակուլտետի դեկանի տեղակալն էր՝ ուսումնական աշխատանքների գծով, իսկ 1975 թվից մինչ օրս՝ ՀՊՄՀ-ի Կուլտուրայի ֆակուլտետի երաժշտության ամբիոնի դասախոս, դոցենտ:

Իր գիտամանկավարժական ողջ գործունեությունը նա անմնացորդ նվիրումով իրականացրել է մանկավարժական մայր բուհում, կրթել և դաստիարակել երաժիշտ-մանկավարժների տասնյակ սերունդներ՝ փոխանցելով դիրիժորության և գործիքավորման վերաբերյալ գիտելիքներ: Սարգիս Գայիջյանը վայելում էր ուսանողների և գործընկերների սերն ու հարգանքը:

Մանկավարժական համալսարանը ցավակցում է Սարգիս Գայիջյանի ընտանիքին: Վաստակաշատ մանկավարժի հիշատակը վառ կմնա իր գործընկերների և ուսանողների սրտերում:

Հետաքրքիր դասախոսություն

Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի պրոֆեսոր Սերգեյ Աթանասյանը դասախոսությամբ հանդես է եկել Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետում:

Միջազգային համագործակցության շրջանակներում՝ Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նախաձեռնությամբ անցկացված գիտամեթոդական սեմինարի ընթացքում պրոֆեսորը Աթանասյանը ներկայացրել է «Էվկլիդեսի հինգերորդ պոստուլատը» թեմայով զեկույցը, ապա ցուցադրվել է «Հինգերորդ պոստուլատի առեղծվածները» վավերագրական ֆիլմը:

Բ. Ժամկոչյանի անվան N 119 դպրոցում շարունակվում է աշխարհագրության բաժնի 3-րդ կուրսի ուսումնաճանաչողական պրակտիկան:

Ուսանողները տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտություններ և կարողություններ են ձեռք բերում՝ ապագա ուսուցչի գործունեության առաջին քայլերն անում: Պրակտիկայի ընթացքում նրանք համոզվում են, որ ճիշտ են ընտրել մասնագիտությունը և սիրով նվիրվելու են ապագա ուսուցչի առաքելությանը:

Իմ ամբողջ կյանքը ներշնչանք և ոգեշնչում է

«Դեռ մանկուց եմ միշտ նկատել գեղեցիկ բնապատկերները, հիացած նայել եմ անձրևին, անտառին և գույներին»,- մեզ հետ զրույցում ասաց գեղանկարիչ Աննա Սողոմոնյանը: Ծնունդով երևանցին միշտ ապրել է Դիլիջանում և կարծում է, որ այնտեղ ապրելն է հենց մեծ հետք թողել իր մասնագիտական ընտրության հարցում: Ավելի հասուն տարիքում, ինքն իրեն վերլուծելով, հասկացել է, որ ուղն ու ծուծով, մտածելակերպով կոչված է միայն արվեստով ապրելու:

Աննա Սողոմոնյանն ունի այլ մասնագիտություն՝ ավարտել է հոգեբանության ֆակուլտետը, բայց երբեք չի զբաղվել հոգեբանությամբ, չնայած որ չափից շատ հոգեհարազատ է եղել այն: «24 տարեկանում հասկացա, որ ես ուրիշ ոչինչ չեմ ուզում անել, բացի մոլբերտի դիմաց նստելուց և ստեղծագործելուց, և փոխեցի մասնագիտությունս»:

Նկարները, որոնք նկարում է Աննան, մեկ բառով անվանում է՝ ֆանտազիա. բոլոր կերպարները, բնապատկերները, անգամ նատյուրմորտները, որ նա նկարում է, շատ հաճախ ունեն մեծ հորինվածքի բաժին:

Ցուցադրությունների շատ է մասնակցել, ինչպես անհատական, այնպես էլ խմբային և՛ Հայաստանում, և՛ արտերկրում. երեք անգամ մասնակցել է ցուցադրությունների ԱՄՆ- ում ու Մոսկվայում:

Նկարչուհին իրեն հոգեհարազատ է համարում ամեն վերջին նկարը, մինչև հաջորդ կտավի ստեղծումը, որն իր կարծիքով ավելի հետաքրքիր կլինի:

«Մարդիկ սիրում են իմ նկարները. միշտ ուրախանում եմ, երբ ինձ գրում են և ջերմ խոսքեր ասում, ու թեև ես նկարելիս անգամ չեմ մտածում թե ում դուր կգա, ում՝ ոչ, բայց, անշուշտ, հաճելի է»:

Շատ է սիրում դեղինի և նարնջագույնի բոլոր երանգները:

Աննան նաև նշեց, որ շատ սիրում է արևածաղիկներ նկարել, թեև դրանք շատ դժվար է պատկերել. շատ արագ են թառամում և պետք է հասցնես պահը որսալ:

«Իմ գլխում միշտ կան գաղափարներ, մտքեր, որոնք ուզում եմ իրականացնել. իմ ամբողջ կյանքը ներշնչանք և ուգեշնչում է»,- եզրափակեց գեղանկարիչ Աննա Սողոմոնյանը:

Գոհար ԹՈՐՈՍՅԱՆ
ՀՊՄՀ Հեռուստառադիոլրագրության 4-րդ կուրսի ուսանողուհի

Դպրմում են լուսանկարները

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի Կուլտուրայի ֆակուլտետի «Գրադարանագիտություն և մատենագիտություն» բաժնի 3 -րդ կուրսի ուսանողները ամբիոնի երջանկահիշատակ վարիչ Հրաչյա Կոստիկյանի և դասախոսներ Քնարիկ Կորկոտյանի, Գուրգեն Մկրտչյանի հետ Գառնիում (1984 թ.):

ՄԵՐՕՐՅԱ ՊՈԵԶԻԱ

❒

Երկնքում աստղերի նորօրյա շքերթ,
Եռաբլրում՝ դրոշների տխուր ծփանք,
Ու հին աստվածների տարօրինակ երթ,
Դարի խռովք անվերջ, հոշոտված կյանք...
Ամեն օր երկնքում մի նոր աստղ է ցոլում,
Մի նոր զոհի անուն սլանում է վերև,
Նրանց հերոս արյամբ արշալույսն է ցողվում,
Ծառն է դողում ցավից, թափում տերև...
Ի՜նչ լույս տվերք էին՝ դարձան դպրոց ու շեն,
Նրանց անուններից լույսն է անգամ դողում,
Վարդան, Գևորգ, Կարեն... և ո՛ր մեկին հիշել...
Մի-մի ծաղիկներ են դարձել հողում:
Տառապանքից հողն է նորից տնքում,
Ցավից ճեղքվում, անզոր նայում երկինք,
Նրանք՝ կակաչ, հասմիկ, վարդ ու քրքում՝
Որ էլ երկինք չունեն, ոչ էլ տանիք:
Ո՞ւր եք, հին աստվածներ, դու մեր Հիսուս,
Որ չտարաք նրանց ձեր թևերին,
Որ աշունը չգար, չթողներ անհույս
Վշտից աղոթք դարձած հայ մայրերին:
Ի՜նչ լույս տվերք էին՝ դարձան դպրոց ու շեն,
Նրանց անուններից լույսն է հիմա դողում,
Հարութ, Արտակ, Աշոտ... և ո՛ր մեկին հիշել...
Մի-մի ծաղիկներ են դարձել հողում:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

❒

Լուսացավ օրը կորստի վախով,
Արևի շողում ջերմություն չկա,
Արցունքն եմ ցավիս լվանում լույսով,
Վրեժս, ցավոք, ինձ հետ կմնա:
Ես պարտությունը չեմ ներում երբեք,
Կորստյան բեռը թեթև է լինում,
Եթե արյունը սուրբ նահատակի
Միայն հաղթական փառքով է օծվում:
Մեր պապենական հողում սրբազան,
Որ ջրվեց արյամբ վեհ հերոսների,
Լուռ կորանում է բերքից քաղցրահամ
Ծառը վրեժով ջրված արյունի:
Եվ լուսանում է օրը ակամա,
Երկյուղով նայում քամու աչքերին,
Ու հրակարմիր աշնան ծառերը
Ներկվում անկոտրում գույնով պայքարի:
Օրը կբացվի դեռ հաղթանակով,
Ինձ խոստանում է գենն արդար հայի,
Որտե՞ղ ենք ընկել մտքով և ուժով,
Դեռ մեզ կավետի լուրն հաղթանակի:
Ու՞ր է մեր խելքը, աշխարհով փռված,
Ճառեր են ասում, հարմարվում ցավին,
Սուրբ էր արյունը, ծառն էլ սրբացավ,
Վա՜յ տամ այդ բերքը արյամբ ուտողին:
Ձա՜րկ տանք մեր մտքին, ոգուն ու պատվին,
Հարիր չէ հային ծնկելով քարշ գալ,
Ու չտրվելով սին պատրանքներին՝
Հաղթանակ կերտենք մինչ արևագալ:

Աննա ԴԱՎԹՅԱՆ

ԹՈՂ ՉՏԵՍՆԻ ԹՇՆԱՄԻՆ

Տագնապում ես, Հայոց ազգ,
Էս նորելուկ գայլերից,
Տագնապում ես, չդողա՛ս,
Ծնկի չգա՛ս, կոտրվես,
Դա չտեսնի թշնամին...
Ոտքդ սեղմիր քո հողին,
Որ զորանաս ու ծաղկես
Ու պինդ մնաս քո հողին...
Թող չտեսնի թշնամին
Ոտքիդ դողը տագնապի,
Արիացիր ու սեղմիր
Երկու ոտքդ քո հողին:
Այնպես սեղմիր, որ զգա
Քո մեծ ուժը կոկորդին
Քո հին ու նոր թշնամին...

ՑԱՎԻ ՇԱՊԻԿԸ

Լույսը բացվում է, աչքս չի կպել,
Գիշերն եմ մաշում՝ տագնապով լցված,
Ցավի շապիկն եմ վերստին հագել,
Կարծես թե հատուկ ինձնով է կարած:
Լույսը բացվում է, աչքս չի կպել,
Քանի քանիսն են բաց աչքով քնած,
Ուզում եմ ցավի շապիկը հանել,
Բայց, ավա՜ղ, արդեն մաշկիս է կպած:
Լույսը բացվում է, աչքս չի կպել,
Ցավի դերձակը շապիկ է կարում,
Վաղուց հին շապիկն ինձ մաշկ է դարձել,
Դերձակը ինձ նոր շապիկ է կարում ...

Վրեժ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

ՀՈՂԻ ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔԸ

Մեզ ստիպեցին, որ մենք պարտվենք,
Դուրս գանք դարավոր պապական տնից,
Լքվածության մեջ ջանասիրաբար
Հողն էլ խլեցին նրանք մեր ձեռքից...
Խլի՛ր մեզանից, ինչ-որ դու կուզես...
Ինչ-որ կարող ես գրկել՝ հետդ տա՛ր,
Թող որ մեկ հյուլե անգամ չմնա,
Նենգ ցանկությունդ թող լինի կատար...
Բայց մինչ տանելդ հաստատ իմացի՛ր,
Պատահական չենք այս դարը հասել,
Հայը փյունիկն է՝ հույսն անծայրածիր,
Հողն էլ իր վերջին խոսքը չի ասել...
Կրկին մեր հողում մենք պիտի ծաղկենք...
Մեր հույսը մենք ենք ու մեր Աստվածը,
Արարատ լեռան գագաթին բազմած...
Անգամ կերոնվող Մայր Հայաստանը
Արևորդին է փառքը հավերժած...

Կարեն ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

ԻՄ ԱՐՑԱԽ

Արալեզի պես վերքերդ լիզեմ,
Փյունիկի նման հարություն առնես,
Վերընծյուղվես, իմ ոգեղեն ամրոց,
Ու հաղթանակած կրկին թևածես:
Ցրես կուտակված ամպերը երկնիդ,
Հողիդ աչքերի արցունքը սրբես,
Նահատակացդ փառք տալով՝ կրկին
Ոգեղեն սերմդ՝ հողիդ մեջ ցանես:
Ամեն սերմի հետ՝ քաջացդ հիշես
Անուն առ անուն, հատիկ առ հատիկ...
Հունդերդ խնդաարցունքով ջրես՝
Ձոնելով երգեր խաղաղատաղիկ:
Եվ այս անարդար աշխարհում դեռ պիտ
Դու արդարության սուրբ սիմվոլ դառնաս,
Արդարապահանջ հոգուդ դրոշով
Դու հաղթանակած դեռ պիտ փողփողաս:
...Արալեզի պես վերքերդ լիզեմ,
Փյունիկի նման հարություն առնես,
Վերընծյուղվես, իմ ոգեղեն ամրոց,
Եվ հաղթատաղիկ կրկին թևածես:

Սիդա ՏՈՆՈՅԱՆ

ՌԵՔՎԻԵՄ

Բարձր մի խոսեք,
Գարունն է մեռել,
Կարմիր են ծաղկել ձնծաղիկները,
Մայրերը վշտի քողեր են հագել,
Հողում պառկած են մեր հերոսները:
Բարձր մի խոսեք,
Մեր սիրտն է սառել,
Ողբում են երկրիս բոլոր վանքերը,
Քամին մի քաջի մարմին է գտել
Եվ լուռ լիզում է նրա վերքերը:
Բարձր մի խոսեք,
Խավարն է գժվել,
Դաշտերում ընկան նվիրյալները,
Վագրի պես կռվող ահել ու ջահել՝
Հայրենի պատվի խաչակիրները:
Բարձր մի խոսեք,
Խորանն են պղծել,
Արյուն են խմում բորենիները,
Մեր փառքի վսեմ ոգին են գետնել,
Եվ քրքջում են մարդակերները:
Բարձր մի խոսեք,
Վառեք մոմերը,
Լուռ տարեք դաժան հարվածը դավի,
Թող հանգիստ գտնեն լույս-հոգիները
Սուրբ տաճարներում մայր տիեզերքի:

Արմեն ՍՏԵՓԱՆՅԱՆ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ